«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ *Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում*

Առարկան՝ *Հայ գրականություն*

Հետազոտող ուսուցիչ՝ *Մարիամ Սարգսյան*

Ուսումնական հաստատություն՝ *Աբովյանի Վիկտոր*

Համբարձումյանի անվան թիվ 10 հիմնական դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն……3
«Սասնա ծռեր» էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում……4-15
Եզրակացություն……16-17
Գրականության ցանկ…… 18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազգային էպոսներն ամեն ժողովրդի երազանքներն արտահայտող գրական հուշարձաններ են, որոնք ուղեկցում են ազգի հետագա ընթացքին՝ հիշեցնելով, թե ինչ է դնում հայրենիք սրբազան հասկացության մեջ տվյալ ժողովուրդը: Ըստ օտարազգի էպոսագետների՝ «Սասունցի Դավիթը» աշխարհի լավագույն էպոսներից մեկն է, իսկ ըստ ֆրանսիացի նշանավոր հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիի, որը 1964-ին թարգմանել ու հրատարակել է էպոսը ֆրանսերենով, իր խաղաղասիրական ու դեմոկրատական գաղափարախոսությամբ հայկական ազգային էպոսն անզուգական է: Մի՞թե հավերժորեն ճշմարիտ չէ, որ ժողովուրդները պետք է ապրեն խաղաղության և բարեկեցության մեջ: Էպոսի դյուցազունները՝ Սասնա տերերը, առաջին հերթին մտածում են իրենց ժողովրդի բարօրության մասին: «Սասունցի Դավիթ» էպոսը բացառիկ ազգային ու համամարդկային արժեքով համեմված սիրո ու երախտագիտության մի ընդհանուր խոսք է: Էպոսը ամեն հայի պետք է ուղեկցի նրա կյանքի բոլոր տարիքներում, որովհետև էպոսի ասելիքը ամեն մի ժողովրդի հավաքական մտածողության դարավոր կենսափորձի հիման վրա է առաջացել և ասվել է դարերի համար ոպես ուղեցույց:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել էպոսում արտահայտված գաղափարները՝ մասնավորապես հայրենասիրությունը: Այդ նպատակով հետազոտական աշխատանքի հարցը և նպատակը սահմանվել է այսպես՝

Հետազոտական աշխատանքի հարցը՝

- *Ինչպե՞ս դաստիարակել հայրենասեր քաղաքացի «Սասնա ծռեր» էպոսի միջոցով:*

Հետազոտական աշխատանքի նպատակները՝

- *Էպոսի՝ որպես ազգային արժեքների ձևավորմանը նպաստող գործոնի ուսումնասիրում:*
- *Իմանալ էպոսի գաղափարական բովանդակությունը և կերպարների կերտման սկզբունքները :*
- *Ծանոթանալ հայ ժողովրդական դյուցազներգությանը ՝ որպես ազգային արժեքների համապարփակ արտահայտություն:*
- *Սովորողի դաստիարակության, մտածողության , բարոյական արժեքների ձևավորման , զարգացման վրա ներգործության բացահայտում :*

Ինչու՞ է կարևոր էպոսի ուսումնասիրումը.

- ✓ Էպոսի ուսումնասիրումը բացառիկ նշանակություն ունի սովորողներին հոգևոր և բարոյական, ազգային և համամարդկային արժեքներով դաստիարակելու գործում:
- ✓ Դպրոցը պետք է օգտագործի իր դաստիարակչական ներուժը՝ սովորողների մեջ սերմանելով բարություն, ազնվություն, ճշմարտասիրություն, հարգանք մարդու նկատմամբ և այլն:
- ✓ Մեր իրականության մաս կազմող արժեքները՝ հոգևոր և նյութական, ամուր հենարաններ են, որոնք սովորողին, որ վաղվա քաղաքացին է, օգնելու են պայքարելու կյանքի հարուցած խոչընդոտների դեմ, դիմակայելու ստեղծված փորձություններին, հաղթահարելու անելանելի թվացող դժվարությունները:
- ✓ Հայրենասիրական ստեղծագործությունների ուսումնասիրումը անհրաժեշտ գործընթաց է հայ դպրոցականի համար: Դրանց միջոցով նա ծանոթանում է ազգի մշակույթին, նրա անցած պատմական ուղուն, հայտնի հերոսներին: Ստեղծագործու-թյունները ուղղակիորեն ազդում են սովորողների ներաշխարհի, հոգեբանության վրա, հարստացնում ու զարգացնում են նրանց արժեքային համակարգը, սովորեցնում սիրել հայրենիքը և անհրաժեշտության պահին պայքարել նրա ազատության և անկախության համար:
- ✓ Ցանկալի արդյունքի հասնելու համար ստեղծագործությունների ուսումնասիրումը պետք է իրականացվի ճիշտ ու նպատակային ընտրված մեթոդների միջոցով:
- ✓ Երեխաների հետ աշխատելիս ուսուցչի գերխնդիրն է յուրաքանչյուրին սովորեցնել ճանաչել ու սիրել հայրենիքը՝ ուժերի հնարավորության չափով նպաստ բերելով նրա բարգավաճմանը:

«Սասնա ծռեր» էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

«Սասունցի Դավիթը» իր գաղափարի և փիլիսոփայական
թռիչքի բարձրությամբ, իր դիապազոնով,մի խոսքով, իր
էությամբ ոչ թե հայ ժողովրդի պատմության մի էպիզոդն է,
այլ հայ ժողովրդի ողջ պատմությունը:
Դերենիկ Դեմիրճյան

Անհեղինակ, ժողովրդական ստեղծագործություններում՝ առասպելներում, էպոսում, հեքիաթներում և ավանդազրույցներում, ինքնաբուխ ձևով դրսևորվում են տվյալ ազգի ինքնության, աշխարհատեսության, հոգեկերտվածքի և վարքագծի գծերը, երկարատև հարմարումների հետևանքով ձևավորված արժեքային մոտեցումներն ու դիրքորոշումները: Քանի որ առասպելները, էպիկական պատումները, լեգենդներն ու ավանդազրույցները գալիս են դարերի խորքերից ու իրենց վրա կրում են այդ դարերի կենսակերպի ու մտածելակերպի հետքերը, դրանք լավագույնս արտացոլում են Աստծո, բնության, հասարակության, մարդու, կյանքի, ազգի, հայրենիքի, պետության և այլ արժեքների ու երևույթների վերաբերյալ տվյալ ժողովրդի պատկերացումները: Այլ խոսքով՝ էպիկական կերպարների, հատկապես հերոս-դյուցազունների սխրագործությունների, վարք ու բարքի վերլուծությունն անսպառ նյութ կարող է տալ ոչ միայն նրանց, այլև տվյալ ազգի մտածելակերպն ու գործելակերպը, բարոյահոգեբանական յուրահատկությունները որոշ իմաստով հասկանալու ու գնահատելու համար:

Ժողովրդական վեպը, դյուցազնավեպը կամ էպոսը մարմնավորում է տվյալ ժողովրդին առանձնահատուկ, նրան բնորոշ հատկությունները: Ժողովրդի ապրումները, նրա ձգտումներն արտահայտող նման ստեղծագործությունները մշակվում են երկար ժամանակ, դարերի ընթացքում, բայց վերջնական ձևավորում են ստանում ժողովրդի ինքության, ինքնագիտակցության բարձրացման որոշակի աստիճանում: «Հայրենասիրությունը կարելի է ձևակերպել որպես հասարակական կյանքի և պետության բոլոր ոլորտներին բնորոշ առավել նշանակալի, անգերազանցելի արժեքների համակարգ, ինչը հանդիսանում է անձի կարևորագույն հոգևոր սեփականությունն ու բնութագրում է նրա զարգացման բարձրագույն մակարդակը և դրսևորվում ինքնիրացման ակտիվ գործընթացում՝ ի շահ հայրենիքի բարօրության»; Հայրենասիրական դաստիարակությունը, հանդիսանալով անձի համակողմանի զարգացման կարևորագույն հատկանիշներից մեկը, հայրենիքի նկատմամբ աստիճանական և անընդհատ իրագործվող

սիրո և հարգանքի դրսևորումն է: «Սասնա Ծռեր» էպոսի ուսուցումը ընդունակ է անձի մեջ ձևավորել այնպիսի բարոյական որակներ, ինչպիսիք են սերը և հարգանքը հարազատ քաղաքի, ժողովրդի, ընտանիքի, հայրենիքի պատմության արժանի էջերի նկատմամբ և վերջապես ձգտումը՝ տեսնել հայրենիքը ծաղկուն և բարգավաճ: Հայրենասիրություն հասկացությունը օրգանական կապի մեջ է տվյալ երկրի պատմության հետ, քանի որ հայրենիքը միայն արդի ժամանակաշրջանի երկիրը չէ, այլ նրա ողջ պատմությունը, նրա մշակույթի, հոգևոր կայացման ընթացքն է, անցյալը, ներկան, ինչպես նաև ապագան:

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և օտար լեզուների նշանակությունը սույն խնդրի առնչությամբ: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն: Ընդ որում՝ կրթական տարբեր աստիճաններում աշակերտն ունենում է աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան,

հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է»: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության

միջոցով(անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Այժմ փորձենք հասկանալ, թե ինչպես է ձևավորվում ազգային արժեհամակարգը գրականության դասերին: Կրթության զենքը և գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձևավորումը: Արժեքային համակարգը նախատեսում է , որ դպրոցն ավարտող յուրաքանչյուր աշակերտ պետք է լինի հայրենասեր և պատրաստ ծառայելու հայրենիքի պաշտպանության գործին, կարևորի ազգային պետական մտածողություն և գործելակերպ ունենալը և դրսևորի դրան հասնելու ձգտում ու կամք, ունենա ազգային ինքնագիտակցություն, կարևորի ազգային հիմնախնդիրների լուծման գործում իր մասնակցության անհրաժեշտությունը: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիարակչական մի շարք կարևոր խնդիրներ:

Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքների հետ:

Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, ապրելակերպի ու ավանդույթների, բարքի ու վարքի մասին:

Դաստիարակել խորը հայրենասիրություն, ձևավորել հայրենիքի, ազգային պետության ու ժողովրդի նկատմամբ ազգային արժանապատվություն ու հպարտություն: Հաշվի առնելով ժողովրդական բանահյուսության, մասնավորապես՝ էպոսի դերն ու նշանակությունն ազգային ինքնաճանաչողության գործում ուսումնասիրության առարկա է դարձել «Սասնա ծռեր» էպոսը:

Հային դարեդար ուղեկցել է մեր հերոսական էպոսը, որը միաժամանակ ժողովրդի չգրված, բայց միշտ կիրառվող օրենքների գիրքն է: Որքան կարդում, այնքան նորանոր հատկություններ ենք բացահայտում հայի էությունից, դիմագծից:[1]

Հայկական էպոսում արտահայտվել է հայի հավաքական կերպարը իր բոլոր ներքին հակասություններով, սխրագործություններով ու դավաճանություններով, մեծագործություններով ու ազգադավ անտարբերությամբ, օտարամոլությամբ ու անմնացորդ նվիրումի արտահայտություններով: Էպոսի հերոսների կերպարներում հայ մարդու հոգեկերտվածքի յուրահատկությունները դրսևորվել են դիցաբանական սյուժեների «զգեստավորմամբ», այլաբանական դիպվածներով և ծածկագրված խորհուրդներով, որոնք կարոտ են գաղտնազերծման և բազմակողմանի քննության: Հայկական էպոսում արտացոլվել են հայոց բարոյական արժեհամակարգի

[1] Տե՛ս, Մկրյան Մ., Հայ հին գրականության պատմություն, Երևան 1976, էջ 61-62:

անկյունաքարային գաղափարները, արծարծվել մարդասիրական բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնց ուսումնասիրությունն արդիական է ժամանակակից քաղաքակրթական շարժընթացների համատեքստում: Էպոսում արտացոլված են ազգային ինքնության արքետիպային գծերը, որոնց բացահայտումը կարող է հնարավորություններ ընձեռնել քաղաքակրթական արդի հիմնախնդիրների իմաստավորման, մերօրյա իրականության բազմաթիվ թերիների ախտորոշման և հաղթահարման համար: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար էպոսը հիանալի հնարավորություններ է ընձեռում: Էպոսի գաղափարական բովանդակության հիմնական առանցքը հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունն է, որն իր գեղարվեստական մարմնավորումն է ստացել Սասնա դյուցազունների չորս սերունդների կերպարներում: Սասնա դյուցազունները իրենց մարդկային բնավորության անհատական գծերով հանդերձ, միաժամանակ ստեղծագործող ժողովրդի լավագույն ձգտումների, ցանկությունների և երազանքների մարմնավորումն են և բնութագրվում են հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ: Սանասարն ու Բաղդասարը հիմնադրելով Սասնա բերդը՝ ապահովում են ժողովրդի անվտանգությունն ու քրտնաթոր աշխատանքի անձեռնմխելիությունը: Նրանք, ինչպես նաև նրանց հետևորդները, իրենց գերմարդկային ուժն օգտագործում են ոչ թե սեփական փառք ու իշխանություն ձեռք բերելու նպատակով, այլ ի սպաս են դնում ժողովրդի բարօրությանն ու ազատ կյանքին: Ժողովրդասիրության ու հայրենասիրության փայլուն օրինակ է տալիս առյուծաձև Միհրը: Իմանալով, որ երդմնազանց լինելու դեպքում ինքն ու կինը պետք է մահանան, նա դիմում է այդ քայլին, որպեսզի իրենից հետո Սասունն անտեր ու անպաշտպան չմնա: Սա հայրենասիրության աննկարագրելի օրինակ է, որն աշակերտին պետք է մատուցվի ամենանոխոր նրբերանգներով՝ ոգահեռելով այսօրվա իրականությանը: Դավթի կերպարում մարմնավորվել են իրեն ծնող ժողովրդի ազգային հատկանիշները: Ազատության գաղափարը էպոսում սահման չի ճանաչում, չի պարփակվում իր ժողովրդի շրջանակներով, այլ հնչում է որպես համընդհանուր գաղափար, դառնում սրբություն: Ահա դրա մեկ օրինակը. Դավիթը քանդում է հոր որսատեղի պարիսպները և ազատություն է տալիս անգամ որսի կենդանիներին: Դյուցազնավեպում ժողովուրդը կյանքի իմաստը տեսնում է խաղաղ աշխատանքի մեջ: Ատելությամբ է վերաբերվում թալանով, կողոպուտով ապրողների նկատմամբ: Լայն տեղ է տրվում հնից ժառանգած և հայ ժողովրդի համար ավանդություն դարձած կյանքի երևույթներին, դարերի ընթացքում ձևավորված, նրան հարազատ դարձած, նրա կենցաղի մեջ մտած ազգային սովորություն դարձած մարդկային հատկանիշներին: Դրանցից են ընտանիքի նկատմամբ խոր հարգանք ունենալը, նրան ենթարկվելը, անչափահաս ժառանգին հորեղբոր, մորեղբոր կողմից խնամելը, փորձով իմաստնացած մեծահասակ մարդկանց

խորհուրդներին հետևելը: Սասնա դյուցազունները, իրենց մարդկային բնավորության անհատական գծերով հանդերձ, միաժամանակ ստեղծագործող ժողովրդի լավագույն ձգտումների, ցանկությունների և երազանքների մարմնավորումն են և բնութագրվում են հայրենիքին ու ժողովրդին անձնուրաց ու անմնացորդ նվիրվածությամբ: Հայրենիքի նկատմամբ նույնպիսի պատասխանատվության զգացումով են օժտված կանայք: Նրանք գեղեցիկ են, զգայուն, խոհեմ, պարկեշտ ու միշտ պատրաստ են իրենց կյանքը զոհելու հայրենիքի ու ընտանիքի համար: Վիպերգի կանայք նաև խիզախ են ու մարտնչող: Հայ ժողովուրդը չի ստորադասել կնոջը տղամարդուց: Պատմության հոլովույթում օտարերկրյա հզոր ուժերը հաճախ ավերել են մեր երկիրը, ոչնչացրել պատմական հուշարձանները, հոգևոր և աշխարհիկ շինությունները, բայց չեն կարողացել ընկճել հայ ժողովրդի ազատության ձգտող կենդանի ոգին:

Դյուցազնավեպը սկզբնավորվել է Սասունում, բայց աստիճանաբար տարածվել է ամբողջ ժողովրդի մեջ և դարձել համազգային: Այն իր մեջ ներառել է անցյալի առասպելական պատումները՝ սկսած Հայկի և Բելի պայքարից, այսինքն՝ հայ ժողովրդի առաջացման, բռնակալ իշխանությունների դեմ պայքարի ժամանակաշրջանից: Թումանյանը էպոսը դիտում է որպես հնագույն ժամանակներից՝ Հայկ Նահապետից սկսած, ժողովրդի մտածումների, ձգտումների, երազանքների արտահայտություն: Երկար դարեր բանահյուսությունն է եղել ժողովրդական մտքի միակ ասպարեզը: Հազարամյակների ընթացքում ժողովուրդն է սերնդից սերունդ մշակել Դավթի կերպարը, նրա մեջ դրել իր լավագույն զգացումները, ձգտումները, իղձերն ու նպատակները, որը պետք է փոխանցել հայ զավակին, աշակերտին:

«Սասունցի Դավիթ» էպոսը օտար բռնակալության դեմ հայ ժողովրդի դարավոր պայքարը ներկայացնող էպիկական հուշարձան է, աշխարհի էպիկական ստեղծագործությունների շարքում լավագույն հուշարձաններից: Լայն ընդգրկումով, կառուցվածքի ամբողջականությամբ, ժողովրդավարությամբ, ազգային ոգին համակողմանիորեն արտահայտելու հատկանիշներով առանձնանում է շատ ժողովուրդների դյուցազնավեպերից: Հայկական էպոսի նշված հատկանիշները համամարդկային բնույթ ունեն, որոնք ձևավորվել, մշակվել են դարերի ընթացքում և բնորոշ են հայ ժողովրդին: Պատմության հոլովույթում օտարերկրյա հզոր ուժերը հաճախ ավերել են մեր երկիրը, ոչնչացրել պատմական հուշարձանները, հոգևոր և աշխարհիկ շինությունները, բայց չեն կարողացել ընկճել հայ ժողովրդի՝ ազատության ձգտող կենդանի ոգին, այդ նույն ոգին պետք է արթուն մնա յուրաքանչյուր հայորդու մեջ՝ իբրև ժառանգություն Սասնա դյուցազուններից: Սա է «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսի

հիմնական գաղափարը, նրա էությունը[2]:

«Սասունցի Դավիթ» էպոսի բացառիկ արժեքներից մեկը արտահայտված գաղափարներն են: Բնականաբար, առաջատար գաղափարը հայրենասիրությունն է, որի մարմնավորողը հայ կինն է: Էպոսում ազգանվեր ու հայրենասիրական գործեր կատարում են թե՛ Սանասարն ու Բաղդասարը, թե՛ Մեծ Մհերը, թե՛ Սասունցի Դավիթը, թե՛ Փոքր Մհերը: Նրանց Էպոսի գլխավոր նպատակներից մեկն էլ մարդասիրության դաստիարակումն է: Էպոսում կա աշխատավոր մարդու նկատմամբ հատուկ պաշտամունք, և Սասնա դյուցազուններն ապրում են այդ գիտակցությամբ. «Նրանց բնավորության ժողովրդական բնույթը սրանով չի ավարտվում: Նրանք պարզությամբ տիրապետում են ամենահամեստ արհեստների, բարեկամանում են խեղճերի հետ, կամովին ձեռք են մեկնում հոգնած գեղջուկներին, նույնիսկ, եթե նրանք ճանապարհին հանդիպած օտարականներ են: Նրանց համեստությունն այնքան մեծ է, որ ինչպես Օրբելին է նկատել Երևանի հրատարակության առաջաբանում. «Այս չորս հերոսների անունները ժողովրդի հիշողության մեջ չեն աղարտվել ու խճողվել ոչ մի տիտղոսով կամ պատվավոր կոչումով»,- գրում է Ֆ. Ֆեյդին: Էպոսում փառաբանվում է այն անհատը, որը հանուն հայրենիքի պատրաստ էր զոհել իր կյանքը, և ի հավելումն այդ գաղափարի՝ սրբազան է համարվում որևէ ժողովրդի՝ հանուն իր ազգային ազատության ու անկախության նվաճողների դեմ ուղղված պատերազմը: Էպոսի տարբեր էջերում տեսնում ենք քրիստոնեական պաշտամունքի դրսևորումներ, որը ևս հայրենասիրության յուրովի դրսևորում է: Քրիստոնեական հավատալիքները երևում են նաև էպոսի «Վերջերգում»՝ կապված քրիստոնեական հավատքի երկու կարևոր տոների՝ Վարդավառի և Համբարձման հետ: Հայկական էպոսի հերոսները դուրս են եկել ժողովրդի միջից և մշտապես կապված են մնացել նրա հետ: Նրանց բարքերը, սովորությունները հասարակ մարդկանց, ժողովրդի կենցաղն է: Ժողովրդի հետ սերտորեն առնչված, պարզ ու միամիտ, բայց մշտապես արդարամիտ լինելով՝ միաժամանակ դրսևորում են ազնվականին հատուկ արժանապատիվ կեցվածք: Հայ հերոսները արդարամիտ ու ազնիվ են իրենց բոլոր արարքներում: Էպոսի բոլոր ճյուղերն էլ սկսում են ողորմիների շարանով՝ ուղղված տվյալ ճյուղի հիմնական գործող անձանց: Հայ ժողովուրդն այնքան արդարադատ ու մեծահոգի է, որ ողորմի է ասում անգամ թշնամուն՝ Իսմիլ խաթունին՝ չուրանալով, որ նա է մեծացրել ու պահպանել մանուկ Դավթին: Ու եթե իր սիրելի անձերին ուղղում է «հազա՛ր օղորմի» օրհնանքը, ապա Իսմիլ խաթունին գոնե մեկ օղորմի է տալիս. Դառնամ, զօղորմի՛ն տի տամ Դեղձուն Ճուղ-Ծամին,- հազա՛ր օղորմի. Դառնամ, զօղորմի՛ն տի տամ Քեռի

[2]Տե՛ս՝ Օրբելի - 1956, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956

Թորոսին,- հազա՛ր օղորմի. Դառնամ, զօղորմի՛ն տի տամ Ձենով Հովանին,- հազա՛ր օղորմի. Դառնամ, զօղորմի՛ն տի տամ Էն Ջոջ Միերի՛ն, - հազա՛ր օղորմի Արմաղանին, - հազա՛ր օղորմի. Դառնամ, զօղորմի՛ն տի տամ Իսմիլ Խաթունին, - տի տամ օղորմի (էջ 96):

«Սասունցի Դավիթ» էպոսում կա այն ճշմարիտ միտքը, թե նվաճողներն ու բռնակալներն են հրահրում պատերազմներ: Հասարակ մարդիկ այդ պատերազմի հետ կապ չունեն, ավելին, նրանք դեմ են պատերազմին: Սա էպոսի գաղափարական հարստության այն կետն է, որն առկա է միջնադարյան հայ մատենագրության, ինչպես նաև հայ նոր գրականության մեջ: «Սասունցի Դավիթ» էպոսի դարավոր պատմությունն ապացուցում է, թե ինչպես է բանահյուսական այդ գանձը դարեր ի վեր ոգևորել հայ ժողովրդին, իշխել նրա մտքի ու սրտի վրա և հասել նոր ժամանակներին ու այսօր էլ իր գաղափարներով խիստ այժմեական է և հուզիչ: Հայկական հերոսական էպոսն ունի բացառիկ հարուստ գաղափարախոսություն: Այդ գաղափարախոսության ողջ բովանդակությունը մնում է որպես մշտական պահանջ՝ ուղղված ոչ միայն հայ ժողովրդին, այլև համայն մարդկությանը: «Սասունցի Դավիթ» էպոսի արվեստի ցուցիչն է նրանում գործող հերոսների խիստ անհատականացված և չմոռացվող կերպարների համակարգը: «Սասունցի Դավիթ»–ը հայ ժողովրդի ողջ պատմության ընդհանրացումն է: Հայ ժողովուրդը անկախ ու ազատ ապրելու անպարտելի ուժը, մարդկային իր խոհերն ու ձգտումները մարմնավորել է ժողովրդական էպոսում, մասնավորապես Դավիթի կերպարի մեջ: Հարկ է նշել, որ բոլոր ժողովուրդների էպոսներն իրար հետ ունեն շատ ընդհանուր գծեր: Նրանցում տվյալ ժողովրդի շահերն արտահայտող հերոսները չար ուժերի դեմ պայքարում մշտապես հաղթանակ են տանում: Հերոսները, որոնք ծնունդ են առնում բնության երևույթներից՝ աղբյուրի ջրից, խնձորից, արևի լույսից, աճում են ոչ թե տարիների կամ ամիսների, այլ ժամերի ընթացքում, նրանք անասելի մեծ ուժի տեր են և սխրանքներ են կատարում շատ երիտասարդ տարիքում, պատանեկության շրջանում: Մեծ ուշադրություն է դարձվում դյուցազունների զենքին ու նժույգին: Նժույգը հանդես է գալիս որպես իր տիրոջ կախարդական օգնականը, այն հավատարմության ու սիրո մի յուրահատուկ էտալոն է, որի մեջ եղած հայրենասիրությունն ու նվիրվածությունն անմեկնելի է: Էպոսները ավարտվում են արդարության, բարության հաղթանակով: Ընդհանուր այդ երևույթները հատուկ են նաև հայկական էպոսին: Սանասարը և Բաղդասարը ծնվում են աղբյուրի զուլալ ջրից: Դավիթն ուժ ու կորով է ստանում այդ նույն աղբյուրի ջրից: Հայկական էպոսում առաջին հերթին արժևորվում է բարիքներ ստեղծող արդար աշխատանքը: Մարդու գոյության կարևոր նախապայմաններից մեկը հացն է, որը ստացվում է երկրագործի ծանր աշխատանքի միջոցով: Աշխատանքը, գութանը

ներկայանում է իբրև գոյության հիմք, իբրև առատության աղբյուր: Աշխատանքը՝ որպես կյանքի կենսունակության աղբյուր, առկա է դյուցազնավեպի բոլոր ճյուղերում՝ Սանասարի և Բաղդասարի կողմից Սասնա բերդի կառուցումը, Դավթի կողմից հոր կառուցած Մարութա վանքի վերականգնումը, Փոքր Միհրի կամրջաշինությունը: Դավթին տեսնում ենք գութանի ու գութանավորների հետ: Հյուրասիրվելով գութանավորների մոտ՝ Դավիթը սպառում է նրանց մեկ շաբաթվա սննդի պաշարը, որի պատճառով ստեղծվում է դժվարին կացություն: Դավիթը նրանց ազատում է հոգսից՝ վեց օրվա վարը մի քանի ժամում կատարելով: «Սասունցի Դավիթ» էպոսը ամբողջովին ժողովրդական է ոչ միայն ժողովրդի կենցաղը, վարքն ու բարքերն արտահայտելով, ոչ միայն նրա համար, որ կենսունակ ապրում է ժողովրդի բանավոր պատմության մեջ. էպոսը, ինչպես ճիշտ նկատել է Հ. Օրբելին, ժողովրդական է, քանի որ նրա հերոսների աշխարհայեցողությունը անխզելիորեն կապված է բուն ժողովրդի հետ: «Այս էպոսը ժողովրդական է,– գրում է Հ. Օրբելին,– ժողովրդական է ոչ միայն նրա համար, որ ապրում է ժողովրդական զանգվածների մեջ և պատմվում նրանց բերանով, ոչ միայն նրա համար, որ մինչև վերջին ժամանակներս, մինչև մեր օրերը, ապրում է ժողովրդի բանավոր պատմության մեջ, ոչ միայն նրա համար, որ նրա լեզուն ժողովրդական լեզու է, հին կամ նոր հայերեն գրական լեզվի կազմությանն ու բառապաշարին օտար: Էպոսը ժողովրդական է նախ և առաջ նրա համար, որ նրա հերոսների ամբողջ աշխարհայեցողությունն անխզելիորեն կապված է բուն ժողովրդական ներքնախավերի հետ»[3]...

Էպոսն ամբողջովին մարմնավորում է հայ ժողովրդին առանձնահատուկ, նրան բնորոշ հատկությունները:

«Սասունցի Դավիթ»–ը հայ ժողովրդի ողջ պատմության ընդհանրացումն է: Հայ ժողովուրդը անկախ ու ազատ ապրելու անպարտելի ուժը:

«Սասնա Ծռեր» էպոսը դարեր շարունակ ուղեկցել է հայ ժողովրդին՝ իր մեջ խտացնելով նրա կենսափորձը, իմաստությունը, հոգեբանությունը, հավատալիքները, սովորությունները, նրա վարքն ու բարքը, վեհ գաղափարները, արժեքային համակարգն ու պատ-կերացումները բարոյական, մարդկային արժեքների մասին, ազատասիրությունը, պայքարը բարու, լավի, խաղաղության և

[3] Օրբելի - 1956, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956:

[3] Մնացականյան Ե., Գրականագիտական ուղեցույց բառարան, Երևան, 2013, էջ 129:

ազնվության համար: Այն «ժողովրդի հավաքական մտածողության, ձգտումների և երազանքների արտահայտությունն է»: Ժողովուրդը վիպական հերոսների արարքներով, հերոսական հատկանիշներով արտահայտել է հայրենի երկրի անկախության, ազատության, ինքնապաշտպանության գաղափարը, հայ ժողովրդի հերոսական ու աննկուն ոգին:

Եզրակացություն

Ազգային գաղափարախոսությունը պետք է հուշի սեփական պատմական առաքելություն, որտեղ ամենակարևորը հայրենիքը սիրելն է իրական սիրով: Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը և գլխավոր իմաստը դառնա արժեհամակարգի ձևավորում: Աշակերտները բացահայտելով էպոսի գաղափարական բովանդակության հիմնահարցերը, կունենան տեսլական՝ ինչպիսին դառնալ, դեպի ուր շարժվել առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է ազգային դիմագիծ, պետականամետ մտածելակերպ ունեցող հայ ժողովուրդ և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ և քաղաքացի:

Միջին դպրոցում էպոսի համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի շատ ուշադրություն դարձնելու նրա գաղափարական բովանդակությանը, դաստիարակելու աշակերտներին դյուցազնավեպի ոգով: Աշակերտներն, ընկալելով նյութի հիմնական գաղափարը, կնպաստեն արժեքների ձևավորմանը, որոնք էլ իրենց հերթին կնպաստեն ազգային ինքնության ընկալմանն ու ձևավորմանը: Կձևավորվեն սոցիալական հմտություններ՝ համագործակցելու, իրար աջակցելու, միմյանց կարծիք հարգելու:

Ստեղծագործությունները ուղակիորեն ազդում են սովորողների ներաշխարհի, հոգեբանության վրա, հարստացնում ու զարգացնում են նրանց արժեքային համակարգը, սովորեցնում սիրել հայրենիքը և անհրաժեշտության պահին պայքարել նրա ազատության և անկախության համար: Հայ ազգային էպոսը, որպես մշակութային հուշաձան, պահպանում է իր պատվավորի և գործուն տեղը մշակույթի մեջ և հոգևոր կյանքում, այն կենդանի է ժողովրդի հոգում: Այս տեսանկյունից շատ կարևոր է մեր էպոսի գրաված տեղը մեր մշակայթի մեջ և սա էլ առանձնացնում է մեզ աշխարհի շատ ժողովուրդներից:

Էպոսն անհրաժեշտ է մեր ինքնության պահպանման համար՝ մինչև անգամ մեր մշակույթը ձուլումից զերծ պահելու համար: Եվ այս ժամանակներում ու պայմաններում էպոսի ուսումնասիրությունն ու ճիշտ արժեքը պահպանելը կարևորագույն խնդիր է:

Այսպիսով՝ էպոսը դիտարկելով որպես հայ ժողովրդի ինքնության կնիք, բարձր գնահատելով նրանում արտահայտված համամադկային գաղափարները, անհրաժեշտ է հասկանալ, թե որքան կարևոր է այն ճանաչելն ու պահպանելը, նրա դերն ու նշանակությունը մեր կյանքում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աբեղյան Մ, Երկեր, հատոր Ա, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1966, էջեր 445-446
2. Գրիգորյան Գ., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1980 թ.:
3. Գևորգյան Ա.,«Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում»,Երևան,2002
4. Դոլուխանյան Ա., Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, Երևան, 2008, էջ 185
5. Հակոբյան Ն. «Կերպարների կերտման սկզբունքը «Սասնա ծռեր» էպոսում » 1983 թ.
6. Հակոբջանյան Ա., «Սասունցի Դավիթ» էպոսի գաղափարական բովանդակության բացահայտումը («Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», Երևան, 1982 թ., թիվ 1):
7. Մկրյան Մ., Հայ հին գրականության պատմություն, Երևան 1976
8. Մկրտչյան Լ., Հայ ժողովրդի հերոսական էպոսը, Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, էջ
9. Մնացականյան Ե., Գրականագիտական ուղեցույց բառարան,Երևան, 2013:
10. Սասունցի Դավիթ, համահավաք բնագիր, Երևան, 1990:
11. Օրբելի Հ, Հայկական հերոսական էպոսը, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1956, էջ 6: